## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ.՝ (+37410) 511771, ֆաքս՝ (+37410) 511787*


№ ԴԴ-3-Ն-7009

« 11 » նոյեմբերի 2014 թ.

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ԹՈՒՆՅԱՆԻՆ

✓ ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ս. ԿԱՐԱՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Թունյան,*

Ի պատասխան Ձեր 11.11.2014թ. թիվ 07/022-1780 գրության, հայտնում ենք, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար շրջանակային համաձայնագրերի միջոցով գրասենյակային նյութեր ձեռքբերելու նպատակով հայտարարված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 4-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը հաստատված է ՀՀ կառավարության 09.10.2014թ. թիվ 1107-Ա որոշմամբ:

Կից ներկայացվում է վերոնշյալ որոշման պատճենը:

Առդիր՝ 1 էջ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ ՌՇՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման վարչություն,
գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ /+37410/ 511788, 511-787

Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության
աշխատակազմ
«12» 11 2014 թ.
Մուտք թիվ 33850

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
7258Ն
« 12 » 11 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հոկտեմբերի 2014 թվականի N 1107 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 441-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՎ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի N 441-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

Թույլատրել Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին 2014 թվականի ընթացքում ձեռք բերել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի N 441-Ն որոշման 1-ին կետով սահմանված ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերի պարամետրերից տարբերվող տեխնիկական բնութագրերով ապրանքատեսակներ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թ. հոկտեմբերի 13
Երևան

Voroshum-HK860

Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 9-ի N 1107 - Ա որոշման

## Ց Ա Ն Կ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 441-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՎ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ

| NN ը/կ | Ձեռք բերվող ապրանքի անվանումը | Ապրանքատեսակի անվանումը | Միավորի գինը (դրամ) | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|---|
| 1. | Ծրար | ծրար | 7 | ծրարներ՝ չթափանցող, թղթի հաստությունը՝ 100 գ/մ$^2$, սպիտակ, ինքնասոսնձվող, սահմանված չափի և ձևի՝ 115 × 225 մմ |
| 2. | Ծրար | ծրար | 50 | ծրարներ՝ չթափանցող, թղթի հաստությունը՝ 120 գ/մ$^2$, սպիտակ, ինքնասոսնձվող, սահմանված չափի և ձևի՝ A 3 ֆորմատի |
| 3. | Կարիչի մետաղալարե կապեր | կարիչի մետաղալարե կապեր | 750 | գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր՝ տուփերով (տուփի մեջ՝ 1000 հատ), սահմանված չափի՝ 23/20 |
| 4. | Կնիք | կնիք | 8000 | ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիք՝ ռետինե |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

VoroshumHK860